ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 4. Կրեդիտավորման պայմանագրերը

1. Կրեդիտավորման պայմանագիրը կնքվում է գրավոր:

2. Սպառողը պարտադիր ստանում է կրեդիտավորման պայմանագրի մեկ բնօրինակ:

3. Կրեդիտավորման պայմանագիրը առնվազն ներառում է՝

1) տարեկան փաստացի տոկոսադրույքի չափի վերաբերյալ նշում, որն առնվազն պետք է ներառված լինի նաև պայմանագրի վերջին հատվածում՝ հաճախորդի ստորագրության համար նախատեսված հատվածից անմիջապես հետո՝ նույն էջում.

2) տարեկան փաստացի տոկոսադրույքը փոխելու կարգի, պայմանների և ժամկետների վերաբերյալ նշում.

3) հնարավորության դեպքում կրեդիտը մարելու նպատակով սպառողի կողմից վճարման ենթակա վճարումների, տոկոսների և այլ պարտադիր վճարների գումարի չափի, թվի, հաճախականության կամ ժամկետների, ինչպես նաև այդ վճարումների ամբողջ (ընդհանուր) գումարի չափի վերաբերյալ նշում.

4) ապահովագրության, գնահատման և այլ օժանդակ ծառայությունների գնի մասին նշում, եթե այդ օժանդակ ծառայություններից օգտվելը կրեդիտավորման պայմանագիրը կնքելու կամ գովազդվող տարեկան փաստացի տոկոսադրույքը ստանալու նախապայման է, և այդ ծառայությունների շահառուն կրեդիտավորողն է, կամ կրեդիտավորողը սահմանում է այն անձանց շրջանակը, որոնց հետ սպառողն իրավունք ունի կնքելու օժանդակ ծառայությունների մատուցման պայմանագրեր.

5) սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների), դրանց կիրառման դեպքերի և կարգի վերաբերյալ նշումներ.

6) սույն օրենքի 10-րդ հոդվածում նշված սպառողի իրավունքի վերաբերյալ նշում.

7) մտածելու ժամանակի մասին նշում.

8) ըստ կրեդիտավորման պայմանագրի տեսակի՝ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) նորմատիվ իրավական ակտերով սահմանված տեղեկությունների, պայմանների, կարգի և ժամկետների վերաբերյալ նշումներ:

4. Կենտրոնական բանկն իր նորմատիվ իրավական ակտերով կարող է կրեդիտավորման պայմանագրերում բացահայտվող որոշ տեղեկությունների համար սահմանել պարտադիր կիրառման ենթակա տեքստեր կամ օրինակելի տարբերակներ կամ այլ նվազագույն պահանջներ:

5. Կրեդիտավորման պայմանագրի պայմանները պետք է շարադրվեն պարզ գրական հայերենով:

6. Արգելվում է կրեդիտավորման պայմանագրի կնքումը (այդ թվում՝ առցանց եղանակով վարկի հաստատումը) ժամը 22:00-ից մինչև 07:00-ն ընկած ժամանակահատվածում: